ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/88-Պ

ք. Երևան
2022թ.

01 դեկտեմբերի

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«ԻՆԻԾԸԹԻՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վահան Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

ստորագրեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) շրջանակներում անհրաժեշտ, Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական միջոցների Պատվիրատուին տրամադրման, դրանց սպասարկման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ) սույն Պայմանագրով նախատեսված կարգով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և վճարել դրանց համար սույն Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում:

1.2. Կողմերն արձանագրում են, որ Ծառայությունների մատուցման շրջանակներում Կատարողը պարտավորվում է ապահովել տեխնիկական միջոցների տեղափոխումը, տեղադրումը Մարզահամերգային համալիրի տարածքում՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված հստակ վայրերում, Ծառայությունների մատուցման ողջ ընթացքում դրանց սպասարկումը, ինչպես նաև ավարտից հետո ապամոնտաժումը և հեռացումը Ծառայությունների մատուցման վայրից Պայմանագրով նախատեսված ժամկետներում:

1.3. Կողմերն արձանագրում են, որ Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Պատվիրատուն իրավասու է օգտագործել և տիրապետել Կատարողի կողմից տրամադրված տեխնիկական միջոցները դրանց նպատակային նշանակությանը համապատասխան:

1.4. Ծառայությունները մատուցվում են՝ տեխնիկական միջոցները տրամադրվում են, 2022 թվականի դեկտեմբերի 02-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը ներառյալ՝ համաձայն Հավելված 1-ով նախատեսված մասնավոր ժամկետների: Ծառայությունների մատուցման ավարտից հետո Կատարողը պարտավորվում է իր հաշվին իրականացնել տրամադրված տեխնիկական միջոցների ապամոնտաժումը և հեռացումը Ծառայությունների մատուցման վայրից երեք օրվա ընթացքում:

1.5. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, պատշաճ որակով և սահմանված ժամկետում,

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.1.3. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս՝ պահանջելով տրամադրել Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.1.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

2.1.5. Կատարողի կողմից պարտավորությունների աչ պատշաճ կատարման դեպքում, ձեռք բերել համանման ծառայություններ երրորդ անձանցից և պահանջել Կատարողից ամբողջությամբ հատուցել այդ կապակցությամբ Պատվիրատուին պատճառված վնասները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Կատարողին ապահովել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, ապահովել Կատարողի ներկայացուցիչներին Ծառայությունների մատուցման տարածք մուտք գործելու հնարավորություն և այլն,

2.2.2. Ընդունել սույն Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունները, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում գրավոր հայտնել Կատարողին,

2.2.3. Վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուից պահանջել ապահովել սույն Պայմանագրի 2.2.1. կետով սահմանված պայմանները,

2.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

2.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Ծառայությունները մատուցել Պայմանագրի 1.3. կետով նախատեսված ժամկետներում՝ Պատվիրատուի կողմից նշված Ծառայությունների մատուցման վայր ներկայանալով առնվազն այնքան ժամանակ առաջ, որը բավարար կլինի տեխնիկական միջոցների տեղադրման նախապատրաստական աշխատանքների իրականացման, Ծառայությունների մատուցումը ամբողջությամբ և պատշաճ որակով իրականացնելու համար, պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջները,

2.4.2. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը Կատարողի կողմից երրորդ անձանց ներգրավելը հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ,

2.4.3. Նախքան Ծառայությունների մատուցման սկիզբը տրամադրել Պատվիրատուին անհրաժեշտ տեղեկատվություն (անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ և այլն) տեխնիկական միջոցների տեղադրման, ապամոնտաժման համար և/կամ ըստ անհրաժեշտության այլ նպատակով Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման վայր մուտք գործող (ներկայացող) անձանց վերաբերյալ,

2.4.4. Տրամադրել Պայմանագրով նախատեսված այնպիսի տեխնիկական միջոցներ, որոնց սարքինությունը, հզորությունը և այլ տեխնիկական չափանիշները բավարար կլինեն Մրցույթի շրջանակներում դրանց նպատակային օգտագործման համար, ինչպես նաև

տեխնիկական միջոցները տրամադրելիս ապահովել նաև դրանց պատկանելիքների առկայությունը,

2.4.5. Ծառայությունների մատուցման ողջ ընթացքում պահպանել և հետևել Ծառայությունների մատուցման տարածքում գործող, ինչպես նաև Պատվիրատուի և «Եվրոպայի հեռարձակողների միության» կողմից սահմանված անվտանգության կանոններին,

2.4.6. Ապահովել Ծառայությունների մատուցման ընթացքում տեխնիկական միջոցների սպասարկումը, իսկ անսարքինության, կամ այլ թերությունների ի հայտ գալու դեպքում, անհապաղ ձեռնարկել միջոցներ նման թերությունների վերացման համար, իսկ դրանց վերացման անհնարինության պարագայում՝ իր հաշվին, սեղմ ժամկետներում, փոխարինել տվյալ տեխնիկական միջոցը համանման այլ տեխնիկական միջոցով,

2.4.7. Իրականացնել սեփական միջոցներով տեխնիկական միջոցների ընթացիկ և հիմնական վերանորոգումը ըստ անհրաժեշտության,

2.4.8. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված սույն Պայմանագրի կատարմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 8 137 500 (ութ միլիոն մեկ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Ծառայությունների ընդհանուր արժեքը ներառում է բոլոր կիրառելի հարկերը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվելիք բոլոր ծախսերը:

3.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարումն իրականացնում է հետևյալ կարգով.

3.2.1. Ընդհանուր արժեքի 50%-ը որպես կանխավճար՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 02-ը ներառյալ,

3.2.2. Ընդհանուր արժեքի մնացած մասը՝ հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Սույն Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունները մատուցելուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

4.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

4.3. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները, ինչի հետևանքները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա Պատվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագրի 4.2. կետում սահմանված ժամկետին հաջորդող առաջին իսկ աշխատանքային օրը հաստատելու Կատարողի կողմից ներկայացված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը ու Պայմանագրի 3.2. կետով սահմանված ժամկետում վճարելու դրանով նախատեսված գումարը:

4.5. Եթե Պատվիրատուն Ծառայություններն ընդունում է առանց սույն Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում դրանց արդյունքների ստուգման, ապա զրկվում է Ծառայությունների այն թերությունները վկայակոչելու իրավունքից, որոնք կարող էին հայտնաբերվել մատուցված Ծառայությունների արդյունքը սովորական եղանակով ընդունելու ժամանակ (բացահայտ թերություններ):

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Կատարողի կողմից Ծառայությունները այնպիսի թերություններով մատուցելու դեպքում, որոնք Պատվիրատուն կարող էր հայտնաբերել հանձնման-ընդունման ակտի հաստատման ընթացքում, Կատարողը պարտավոր է Պատվիրատուին հատուցել այդպիսի թերությունների հետևանքով Պատվիրատուին պատճառված վնասները:

5.3. Կատարողը պատասխանատվություն է կրում տեխնիկական միջոցների անսարքինության և/կամ Պայմանագրով նախատեսված բնութագրին, քանակին վերաբերող պահանջների խախտման համար Պայմանագրի ընդհանուր արժեքի 20 (քսան) տոկոսի չափով:

5.4. Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Պայմանագրի 1.3. կետով նախատեսված ժամկետի ավարտից հետո տեխնիկական միջոցների պահպանման համար,

5.5. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու Պայմանագրով սահմանված ժամկետը խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.6. Սույն Պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը Կողմերին չի ազատում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

5.7. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի համար սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

7.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

7.3. Հավելված 1-ը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

7.4. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

7.5. Կողմի՝ սույն Պայմանագրով սահմանված իրավունքին համապատասխանում է մյուս Կողմի պարտավորությունը ապահովել տվյալ իրավունքի իրացումը:

7.6. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.7. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.8. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները կարգավորվում են Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ՝ կախված այդպիսի լուծման շարժառիթ հանդիսացած հանգամանքներից:

7.9. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.10. Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

7.11. Սույն Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

7.12. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.13. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ ՝ 2050022082671001

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող
«ԻՆԻՇԸԹԻՎ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի 7-րդ զանգված, 34 շենք, բն. 36
ՀՎՀՀ՝ 00499754
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220593332392000

Վահան Խաչատրյան
Տնօրեն

Հավելված 1
01 դեկտեմբերի 2022թ. ստորագրված
N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/88-Պ պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ		
Անվանում, բնութագիր		Արժեք/ՀՀ դրամ (ներառյալ հարկերը)
ՄՀՀ գլխավոր մուտքի երեք դռների (4 կվտ հզորության՝ 6 հատ էլեկտրական փչող տաքացուցիչ՝ 2 օր),	4 կվտ հզորության՝ 6 հատ էլեկտրական փչող տաքացուցիչ՝ 2 օր,	5 407 500
ՄՀՀ ետնամասի մամուլի գոտու մուտքի (4 կվտ հզորության՝ 1 հատ էլեկտրական փչող տաքացուցիչ՝ 8 օր),	4 կվտ հզորության՝ 1 հատ էլեկտրական փչող տաքացուցիչ՝ 8 օր,	
ՄՀՀ դրսի հատվածում Շարժական հեռուստակայանի (ՊՏՀ) մուտքի (5 կվտ հզորության՝ 6 հատ էլեկտրական փչող տաքացուցիչ՝ 12 օր),	5 կվտ հզորության՝ 6 հատ էլեկտրական փչող տաքացուցիչ՝ 12 օր,	
Delegation Bubble-ի կենտրոնական, աջ և ձախ կողմերում տեղակայված ժամանցի և դիմահարդարման ու վարսահարդարման սենյակներում (10 կվտ հզորության՝ 3 հատ էլեկտրական տաքացուցիչ՝ 12 օր),	10 կվտ հզորության՝ 3 հատ էլեկտրական տաքացուցիչ՝ 12 օր,	
ՄՀՀ ետնամասի պատվիրակությունների հիմնական մուտքի մոտ տեղադրվելիք վրաններում (5 կվտ հզորության՝ 2 հատ էլեկտրական տաքացուցիչ՝ 12 օր),	5 կվտ հզորության՝ 2 հատ էլեկտրական տաքացուցիչ՝ 12 օր,	
ՄՀՀ գլխավոր Ֆոյեի վերջնամասի աջ դռնից դուրս տեղակայված ծխարանի տարածքում (5 կվտ հզորության՝ 2 հատ էլեկտրական տաքացուցիչ՝ 12 օր)	5 կվտ հզորության՝ 2 հատ էլեկտրական տաքացուցիչ՝ 12 օր	
տեղադրվելիք վրանում ջեռուցման սարքերի վարձակալություն, տեղադրում, սպասարկում և ապամոնտաժում		

Վրանների (3 հատ) վարձակալություն, տեղադրում, դրանց լուսավորության ապահովում՝ ՄՀՀ ետնամասի պատվիրակությունների հիմնական մուտքի մոտ և ՄՀՀ գլխավոր Ֆոյեի վերջնամասի աջ դռնից դուրս տեղակայված ծխարանի տարածքում՝ 14 օր	4x4 չափի (2 հատ), 5x5 չափի (1 հատ), շրջանակը՝ ալյումինե խառնուրդ, միացումները՝ ցինկապատ պողպատ, կտորը՝ ՊՎԽ հատուկ հավելումներով՝ հրակայունություն ապահովելու համար	2 730 000
Ընդհանուր արժեք՝		8 137 500

Պատվիրատու

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ ՝ 2050022082671001

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող

«ԻՆԻՇԸԹԻՎ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի 7-րդ զանգված, 34 շենք, բն. 36
ՀՎՀՀ՝ 00499754
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220593332392000

Վահան Խաչատրյան
Տնօրեն